I - Կարդա այս պատմությունը

ՄԻ ԽՈՐԱՄԱՆԿ ԼՈՒՍԻՆ

Իրենց տան առջև տղան ու աղջիկը գնդակ են խաղում:
Ում հերթն է գնդակը նետելու:
- Ի՛մ:
- Ո՛չ, իմ:
Վեճ է բռնվում, և կարմրակապտավուն գնդակը փախչում է...
Բարձրանում է ծառերից վեր մինչև երկինք, հասնում լուսին, մխրճվում լուսնի մեջ և վայր ընկնում:
Լուսինն ընկնում է գետնին և սկսում ցատկոտել գնդակի հետ:
Ինչ ուրախություն: Հիմա երկու գնդակ կա. մեկը տղայի, իսկ մյուսը աղջկա համար:

Procédure = ……

II - Միացրու բառը համապատասխան նկարին.







տուն *գնդակ* *տղա*
ծառ *աղջիկ* *լուսին*





…….. / 5

III - Շրջանագծիր յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը.

① Ի՞նչ են անում երեխաները:

Նրանք երգում են:

Նրանք խաղում են:

Նրանք աշխատում են:

② Ո՞րտեղ են նրանք խաղում:

Իրենց տանը:

Դպրոցի բակում:

Իրենց տան առջև:.

③ Ի՞նչ գույնի է գնդակը:

Կարմիր:

Կարմիր և կապույտ:

Կարմիր և սպիտակ:

….. / 3 + ….. / 3 = ….. / 6

④ Ի՞նչու երկու գնդակ կա պատմվածքի վերջում :

Որովհետև երեխաներն երկրորդ գնդակը գտան իրենց տանը:

Որովհետև արևն ընկավ երկինքից:

Որովհետև լուսինն ընկավ երկինքից:

⑤ Ի՞նչպես է ավարտվում պատմվածաքը:

Երեխաները հաշտվեցին:

Երեխաները շարունակում են վիճել:

Երեխաներն այլևս գնդակով չեն խաղում:

⑥ Քո կարծիքով այս պատմաությունն իրականում կարո՞ղ է պատահել:

Այո:.

Ոչ:.

Չգիտեմ:

….. / 3 + ….. / 3 + ….. / 3 = ….. / 9